

Արթուր Ա. Հովհաննիսյան

Արվեստագիտության թեկնածու

## ԽՈՐԵՆ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅԱՆԻ ԲՐՈՆՁԵ ՔԱՆԴԱԿՆԵՐԸ\*

**Բանալի բառեր** - Խորեն Տեր-Հարության, բրոնզե քանդակներ, Հայոց ցեղասպանություն, Հայաստան, Ջամայկա, ԱՄՆ, Անգլիա, Իտալիա, ողբերգական բովանդակությամբ պատկերներ, սոցիալ-քաղաքական խնդիրներ, քանդակային ձևեր:

20-րդ դարի հայ անվանի արվեստագետ Խորեն Տեր-Հարությանի ստեղծագործական ուղին սկզբնավորվել է Ջամայկա կղզում, զարգացում է ապրել Անգլիայում և Իտալիայում բնակություն հաստատելու տարիներին: Ավելի ուշ Խորեն Տեր-Հարությանը ստեղծագործել է նաև Հայաստանում, որտեղ առաջին անգամ կիրառել է վարդագույն տուֆը:

1909 թվականին Եփրատին ավամերձ Աշոտավան (Աշվան) գյուղում ծնված՝ և Հայոց Մեծ եղեռնի տարիներին ընտանիքի ողջ մնացած անդամների հետ Արևմտյան Հայաստանից գաղթած քանդակագործ-նկարչի ստեղծագործություններում արձագանք են գտել ինչպես մանկության ողբերգական իրադարձությունները, այնպես էլ 20-րդ դարը նշանավորած այն առանցքային սոցիալ-քաղաքական խնդիրները, որոնք խոր հետք են թողել մարդկության պատմության մեջ: Արվեստագետի երկերում արտացոլվել են Երկրորդ համաշխարհային պատերազմի արհավիրքները, Հիրոսիմայի ատոմային ռմբակոծումը, Վիետնամի պատերազմը և այլն: Սակայն Տեր-Հարությանի արվեստում ողբերգական բովանդակությամբ պատկերներին հաճախ հաջորդել են հերոսական ու լավատեսական, սիրո և միասնության շնչով համակված գործերը:

Խորեն Տեր-Հարությանի արվեստում կարևոր են բրոնզե քանդակները, որոնք հանդիպում են 1960-ական թվականներից սկսած: Նշենք, որ այս շրջանում արվեստագետի այցելությունները Եվրոպական երկրներ հաճախակի բնույթ են ստանում: Իսկ 1962-1963 թթ. Տեր-Հարությանը բնակվում է Իտալիայի Ֆլորենցիա քաղաքում, որտեղ կատարելագործում է բրոնզի հետ աշխատելու տեխնիկան: Արվեստագետի վրա մեծ ազդեցություն են թողնում հատկապես իտալական վերածննդի կոթողները: Արվեստաբան Ֆ. Ս. Լիխթը պատմում է, թե ինչպես է Տեր-Հարությանը

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 30.07.2019:

1 Փաստաթղթերում որպես ծննդյան ամսաթիվ նշվում է 1909 թ. ապրիլի 2-ը, սակայն ըստ Տեր-Հարությանի՝ իր ծննդյան ամիսը ոչ թե ապրիլն է, այլ օգոստոս կամ սեպտեմբեր ամիսները:

արտահայտվում Ֆլորենցիայի մասին: Քաղաքի փողոցներից մեկում գտնվող իր բնակարանի ընդարձակ պատշգամբից դիտելով Ֆլորենցիայի համայնապատկերը՝ Տեր-Հարությանը ասում էր. «Աքանջելի է քայլել նույն այն փողոցներով, որտեղով անցել են Միքելանջելոն, Լեոնարդո Դա Վինչին, տեսնել այն եկեղեցիներն ու քանդակները, որոնցով վերջիններս հիացել են»<sup>2</sup>:

Մշակութային ավանդույթներով հարուստ այս քաղաքում Տեր-Հարությանը կերտում է իր բրոնզե երկերի մի մասը: Ինչպես փայտե և քարե ստեղծագործություններում, նրա բրոնզե քանդակներում նույնպես առկա է թեմատիկ և ոճային բազմազանություն, շոշափվում են համամարդկային հավերժական թեմաներ: Այստեղ նույնպես իր արձագանքն է գտնում գոյատևման համար հերոսական պայքարի, մարդկային անկոտրում ոգու թեման:

Ինչպես քարե քանդակներում, բրոնզով աշխատելիս Տեր-Հարությանը հաճախակի է անդրադարձել հայկական թեմատիկային: Նրա արդեն առաջին բրոնզե քանդակները նվիրված են Հայոց պատմության նշանակալի իրադարձություններին և հերոսներին: Դրանցից են 1960 թ. ստեղծած «**Մուսա լեռան 40 օրը**» (նկ.1) և նույն թվականին քանդակած «Սասնա ծռեր» էպոսի կերպարներից մեկը՝ «**Փոքր Մհերը**» փոքրածավալ քանդակը: Վերջինս հետագայում ծառայում է իբրև նախօրինակ Ֆիլադելֆիայի Ֆերմոնթ զբոսայգում տեղադրված «**Փոքր Մհեր**» մեծածավալ հուշարձանի համար: Հարկ է առանձնացնել նաև 1963 թ. քանդակված «**Անի**» («**Հարգանք հայոց հին մայրաքաղաքին**») բրոնզե հորինվածքը (նկ.2): Այս շրջանում հանդիպում են նաև աստվածաշնչյան, դիցաբանական, ինչպես նաև կենդանիների պատկերներ:



1.«Մուսա լեռան 40 օրը», 1960 թ.



2. «Անի»  
(«Հարգանք հայոց հին մայրաքաղաքին»), 1963 թ.

2 Լիլյո Ֆ. Ս., Խորեն Տեր Յարութեան. նշանաւոր արձանագործը, «Ազդակ», Պեյրուք, 24 օգոստոս, 1963, էջ 2:

Տեր-Հարությանը հաճախ անդրադառնում է դիցաբանական թեմաներին: Այդ շարքից առանձնանում են Լեդայի և կարապի լեգենդին նվիրված ստեղծագործությունները, որոնք ունենին ոճային տարբեր լուծումներ: Քանդակագործը դեռ 1946 թ. կերտել է «**Լեդան և կարապը**» մարմարե քանդակը: Տևական ընդմիջումից հետո նա վերադառնում է այս մոտիվին: Փոխվում են նյութը, ոճը, որի հետևանքով տարբեր ժամանակահատվածներում նրա այս թեմայով ստեղծված գործերը իրարից խիստ տարբերվում են:

1963 թվականի «**Լեդան սպասում է կարապին**» բրոնզե աշխատանքում Լեդան պատկերված է միայնակ (նկ.3): Ի տարբերություն 1946 թ. մարմարե ստեղծագործության «**Լեդան և կարապը**» կերպարի՝ այստեղ Լեդայի մարմնի մակերեսը անհարթ է: Ցայտուն արտահայտված է Լեդայի սպասողական վիճակը, որ ընդգծվում է մարմնի ուղղությանը հակառակ շրջված գլխի դիրքով: Իսկ արդեն 1980 թ. վերակերտված «**Լեդան և կարապը**» բրոնզե հորինվածքում հստակորեն ընթերցվում են Լեդայի և կարապի գրեթե իրական կերպարանքները (նկ. 4): Ի տարբերություն 1963 թ. կերպարի՝ այստեղ Լեդայի մարմինը նրբորեն հղկված է, իսկ կարապի փետրածածկ մակերեսը անհարթ է, և մանրակրկիտ արտահայտված են փետուրների ծավալները:



3. «**Լեդան սպասում է կարապին**», 1963 թ.



4. «**Լեդան և կարապը**», 1980 թ.

Տեր-Հարությանի բրոնզե քանդակներում հանդիպում է մեկ այլ դիցաբանական կերպար և՛ Դանայեն: Ինչպես 1963 թ. «**Լեդան սպասում է կարապին**» հորինվածքում, 1963 թ. «**Դանայեն և ոսկե անձրևը**» քանդակում նույնպես պատկերված է միայնակ կնոջ կերպար (նկ. 5): Բրոնզե այս ստեղծագործությունում արտահայտված է Դանայեի սպասողական հոգեվիճակը: Նրա մարմինն առանձնանում է կոշտ, անհարթ մակերեսով:



5. «Դանայեն և ոսկե անձրևը», 1963 թ.

Աշխատելով բրոնզով՝ Տեր-Հարությանը, ինչպես փայտե և քարե քանդակներում, բացի մարդկային կերպարներից, ստեղծել է նաև կենդանիների պատկերներ: Հարկ է նշել, որ Վուստերի գեղարվեստի թանգարանի կողմից 1932 թ. «Լվացքից հետո» գրաֆիկական աշխատանքը գնելուց հետո 1965 թ. ձեռք է բերվում Տեր-Հարությանի՝ 1963 թ. ստեղծած «Աքլորամարտ» բրոնզե քանդակի (նկ. 6) երեք ձուլածոներից մեկը: «Աքլորամարտի» հիմքում ընկած է աքլորների արյունալի կռիվը: Դրանով արվեստագետը արտահայտում է իր բողոքը կենդանիների դաժան մարտերի դեմ<sup>3</sup>:



6. «Աքլորամարտ», 1963 թ.



7. «Աքլորամարտ», 1962 թ.

<sup>3</sup> Տե՛ս Donkers P., For Armenian Artist, "Peace" Sculpture is Crowning Work, "The Sunday Telegram", Portland, 1988, 23 October, էջ 10:

Պատկերված են մարտի թեժ պահին իրար սուր ճանկերով խոցող աքլորներ: Դրանցից մեկը առավելություն է ստացել հակառակորդի նկատմամբ. նրան հաջողվել է հաղթել մրցակցին: Վերջինս մարմնով գրեթե հայտնվել է հատակին և ենթարկվում է հակառակորդի անխնա հարվածներին: Ուժասպառ հակառակորդի նկատմամբ հաղթանակի հասնելու համար առավելություն ստացած աքլորին մնում է հասցնել վերջնական մեկ հարված: Նա վեր է բարձրացրել ճանկերից մեկը և պատրաստ է հաղթական հարվածի: Ի պատասխան՝ ուժասպառ աքլորը հուսահատ բացել է երախը: Սակայն վստահաբար կարելի է ասել, որ հակառակորդն, այնուամենայնիվ, կկատարի վերջնական հարվածը:

Պատկերված աքլորների մակերեսը չափազանց անհարթ է: Նրանք կարծես բզկտված, փետրահան եղած լինեն միմյանց հարվածներից: Աքլորների բարակ պարանոցները պայքարի ընթացքում կարծես դուրս են պրծնում մարմիններից: Աքլորները պայքարում են ոչ միայն ճանկերով, այլև փորձում են որքան հնարավոր է երկար պարզել պարանոցները, որպեսզի հասնեն թշնամու մարմնի խոցելի հատվածներին ու կոցահարեն: Սակայն առավելություն ստացած մրցակցին հաջողվում է խույս տալ թշնամու կոցահարումներից: Նա հաղթական կեցվածք է ընդունել, պարզել է թևերը և գիտակցում է մոտալուտ հաղթանակը:

“**The Rockland County Journal-News**” պարբերականում արվեստաբան Մարի-ռուֆ Քեմբելը Տեր-Հարությանի մի շարք աշխատանքներից առանձնացնում է «**Աքլորամարտը**»: Ըստ Քեմբելի՝ «**Աքլորամարտը**» արտահայտիչ քանդակ է, որտեղ բրոնզե թռչունների փետուրները այնպես են բզկտված, որ թվում է, թե յուրաքանչյուր պահի դրանք կարող են քանուց ցրվել: Իսկ սուր ճանկերը, թվում է, իրենց մեջ կրում են հզոր ուժ<sup>4</sup>: Իսկ “*The Evening Gazette*”-ի արվեստի քննադատ Ֆլորենս Ռ. Նիլսը, դիտելով Տեր-Հարությանի արվեստը, հատկապես՝ հումանիստական տեսանկյունից, նույնպես առանձնացնում է «**Աքլորամարտը**»: Այստեղ, ըստ նրա, վառ արտահայտվում է հումանիստական մոտեցումը<sup>5</sup>: Նիլսը նշում է, որ աշխատանքը առանձնանում է անհարթ մակերեսով: Դրա համար անհրաժեշտ է եղել նյութի ընտրության հարցում լինել առավել բժախնդիր:

Տեր-Հարությանը, անդրադառնալով «**Աքլորամարտ**» հորինվածքին, նշում է, որ դա բողոք է տարածում գտած դաժան աքլորամարտերի դեմ: Իսկ նյութի ընտրության վերաբերյալ քանդակագործն ասում է, որ փայտը կամ քարը լիովին չեն բավարարում իր պահանջները, այդ պատճառով նա որոշում է աշխատել բրոնզով<sup>6</sup>: Վուստերի արվեստի թանգարանի հավաքածուում գտնվող «**Աքլորամարտ**» քանդակին է անդրադառնում թանգարանի համադրող Լուիզա Դրեսերը: Ըստ նրա՝ սա բողոքի վճռական խոսք է՝ ընդդեմ բռնության<sup>7</sup>:

1971 թ. հոկտեմբերի 16-ին, երբ Հայաստանում առաջին անգամ կազմակերպվում է Տեր-Հարությանի անհատական ցուցահանդեսը, Նկարիչների տանը ցու-

4 Տե՛ս **Cambell M.**, RCC Art Has Balance, “The County Journal-News”, Rockland, 1967, 11 February:

5 Տե՛ս **Niles F. R.**, Fighting Cockerels Protests the Cruelty of Some Sports, “The Evening Gazette”, Worcester, 1965, 4 June, էջ 12:

6 Տե՛ս նույն տեղում:

7 Տե՛ս **Dresser L.**, Worcester Art Museum News bulletin and calendar, Worcester, April, 1966:

ցադրված չորս քանդակների թվում էր «Աքլորամարտը»: Իսկ արդեն 1986 թ. Տեր-Հարությանը «Հերմինե» բրոնզե դիմաքանդակի հետ միասին Մոսկվայի Պուշկինի անվան թանգարանին է նվիրում «Աքլորամարտի» ձուլածոներից մեկը: Երեք ձուլածոներից վերջինը իր մշտական տեղն է գրավում Տեր-Հարությանի՝ Էջմիածնի թանգարանում: Հարկ է նշել, որ թեև «Աքլորամարտ»-ի երեք տարբերակներն ընդհանուր առմամբ նման են, սակայն դրանցում առկա են որոշակի տարբերություններ, որոնք հիմնականում արտահայտված են աքլորների գլուխների, պարանոցների, վերին և ստորին վերջույթների շարժումների մեջ:

Հետագայում Տեր-Հարությանը Վուստերի արվեստի թանգարանին է փոխանցում «Աքլորամարտի» 1962 թ. ստեղծած գրաֆիկական էսքիզը<sup>8</sup> (նկ.7): Այդ առումով հարկ է նշել, որ սովորաբար Տեր-Հարությանին բնորոշ է աշխատանքը սկսել անմիջապես նյութի վրա, առանց նախնական էսքիզների: Դա է պատճառը, որ 1962 թ. մատիտով թղթի վրա արված էսքիզը եզակի օրինակներից է: Վերջինս փոքր-ինչ տարբերվում է բրոնզե վերջնական տարբերակից: Եթե բրոնզե հորինվածքում Տեր-Հարությանը որոշում է հակառակորդներից մեկին պատկերել ընկրկած և գրեթե պարտված, ապա այստեղ իրավիճակը փոքր-ինչ այլ է: Գրաֆիկական աշխատանքում թեև աքլորներից մեկը նույնպես ունի որոշակի առավելություն, սակայն դա բացահայտ չէ: Բրոնզե տարբերակի համեմատությամբ էսքիզը ասես մեկ գործողություն (կադր) առաջ է: Այստեղ իրար հետ դեռ ինչ-որ չափով հավասարաչափ մարտնչող աքլորներ են: Եթե բրոնզե տարբերակում ընկրկած աքլորը այլևս ի վիճակի չէ դիմադրել հակառակորդի վճռական հարվածին, ապա էսքիզում վերջինս ճանկերով բռնել է վճռական հարվածին պատրաստ հակառակորդի ճանկերը: Ինչպես բրոնզե տարբերակում, այնպես էլ մատիտով արված էսքիզում թռչունների մակերեսը չափազանց անհարթ է: Այստեղ նույնպես աքլորները կարծես բզկտված լինեն միմյանց հասցված հարվածներից: Մատիտի ազատ, անկաշկանդ և անկանոն քսվածքն ավելի է ընդգծում գործողության դինամիկան: Կենդանիների ուրվանկարը խախտող և դրանցից դուրս մնացած մատիտի հարվածները ուժեղացնում են շարունակական շարժման տպավորությունը՝ դրանով պատկերին հաղորդելով ֆուտուրիստական ուղղությանը բնորոշ տարրեր: «Աքլորամարտ» հորինվածքի ենթատեքստում Տեր-Հարությանի երկարատև ստեղծագործական գործունեությանը զուգահեռ ընթացող, մշտական հետաքրքրություն ներկայացնող դաժան հակամարտությունների գաղափարն է: Հաշվի առնելով, որ առհասարակ աքլորամարտերը մարդկանց կողմից հրահրված կենդանիների մարտածներ են, կարելի է ենթադրել, որ Տեր-Հարությանը իր հայացքն ուղղում է մարդուն՝ պնդելով, որ կենդանիների այս մարտերը ոչ թե բնության օրինաչափություն են, այլ մարդու կողմից որոշակի նյութական ակնկալիքներով հրահրված գործողություններ, իսկ կենդանիները մարդկային բարքերի զոհերն են:

Վերը նշված թեմաներից բացի՝ Տեր-Հարությանի բրոնզե երկերում առանձնահատուկ տեղ են գրավում հայ պատմական հերոսները, մշակութային գործիչները:

8 Տե՛ս նույն տեղում:

1963 թ., Խորեն Տեր-Հարությանը կերտում է «**Քաջ Վարդանը կառքի վրա**» բրոնզե քանդակը (նկ. 8): Գլխավոր հերոսը՝ զորավար Վարդան Մամիկոնյանը, կառքի վրա է, որի առջևում ծառս եղած ձիւն է: Զորավարի կերպարը ունի խիզախ և մարտունակ տեսք: Դա հատկապես արտահայտվում է հերոսի կեցվածքում: Ուշագրավ է, որ Վարդանի պարզած աջ ձեռքում ոչ թե թուր է, այլ խաչ: Խաչի առկայությունը ցույց է տալիս մղվող պայքարի նշանակությունը<sup>9</sup>: Վարդանը իր հետևից է տանում քրիստոնյա զորքը. նշանակալի է հատկապես զորավարի հետ շրջած գլուխը, որով, կարծես, կոչ է անում զորքին շարժվել իր հետևից: Այս առումով հարկ է մեջբերել արվեստաբան Վահան Հարությունյանի խոսքը. «Ահա մեր պատմության հերոսը՝ Վարդան Մամիկոնյանը, որը ոչ միայն զորավար է, այլև արձանագործի խորիմաստ մեկնաբանությամբ նույնացած է ռազմիկ ժողովրդի հետ»<sup>10</sup>:

8. «**Քաջ Վարդանը կառքի վրա**», 1963 թ.



Հավելենք, որ արտահայտիչ է նաև քանդակում հույժ կարևոր տեղ զբաղեցնող ձիու կերպարը: Կառքը տանող, ծառս եղած ձիու այս կեցվածքը հանդիպում է նաև «**Ավարայրի ճակատամարտ**» բարձրաքանդակում: Նրա՝ 1963 թ. հորինվածքում արտահայտիչ է ձիու երեսի հատվածը, նամանավանդ՝ բաց երախը: Իսկ Վարդանի՝ դինամիկ շարժումներով կերպարի դիմագծերը համեմատաբար հանգիստ են: Ձիու՝ առաջ պարզած առջևի վերջույթները ներդաշնակում են Վարդանի աջ ձեռքի շարժմանը: Դրանով ավելի է սրվում շարժման տպավորությունը:

9 Ինչպես և հետագայում ստեղծված «**Փոքր Մեծի**» կերպարում, որտեղ թուրը վերածվում է խաչի, Վարդանը նույնպես թուրը փոխարինում է խաչով: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Տեր-Հարությանի համար հավատքը պայքարելու առավել հզոր միջոց է, քան սառը զենքը:

10 **Հարությունյան Վ.**, Հայրենաշունչ արվեստ, «Հայրենիքի ծայն», Եր., 1970, 27 մայիս, էջ 4-5:

Ըստ արվեստաբան Մարիոուֆ Քեմբելի՝ «Քաջ Վարդանը կառքի վրա» հորինվածքը չափազանց սլացիկ է ու նրբագեղ: Պատկերված ձին, որ ծառն է եղել, ռազմական ոգի է հաղորդում աշխատանքին: Իսկ Վարդանը իրական առաջնորդ է<sup>11</sup>:

1963 թ. այս աշխատանքում ներկայացվող Վարդան Մամիկոնյանի կերպարը տարբերվում է 1976 թ. «Փոքր Մհեր» արձանի պատվանդանի աջակողմյան բարձրաքանդակից և նմանատիպ՝ 1975 թ. ստեղծված և այժմ Էջմիածնի թանգարանում գտնվող «Ավարայրի ճակատամարտ» բրոնզե բարձրաքանդակի հերոս Վարդանից: Տարբեր է ինչպես կերպարային լուծումներով, այնպես էլ կատարման ոճով: 1963 թ. աշխատանքում խիստ ոճավորված պատկեր է, որտեղ հերոսները ունեն նիհարավուն կառուցվածք և հիշեցնում են նշանավոր քանդակագործ Ալբերտո Զակոմետիի հատկապես ուշ շրջանի սյուրռեալիստական քանդակների հերոսներին<sup>12</sup>, մինչդեռ 1975 թ. և 1976 թ. աշխատանքները արված են ռեալիստորեն: Տեր-Հարությանի «Քաջ Վարդանը կառքի վրա» փոքրածավալ քանդակը դեկորատիվ է, ինչպես Ե. Քոչարի «Վարդան Մամիկոնյանի» արձանը, որը դիտողի վրա թողնում է ոչ այնքան կոթողային, որքան դեկորատիվ տպավորություն<sup>13</sup>:

Չնայած աշխատանքների դեկորատիվությանը՝ երկու ստեղծագործությունների տարբերություններն ակներև են: Դրանք արտահայտվում են ոչ միայն ոճային լուծումներում, այլև հորինվածքային կառուցվածքում<sup>14</sup>: Այդ առումով առաջին հերթին հարկ է առանձնացնել Վարդանի դիրքը: Եթե Քոչարի քանդակում Վարդանը հեծել է ձին, ապա Տեր-Հարությանի Վարդանը կառքի վրա է՝ գտնվելով ձիուց որոշակի հեռավորության վրա: Այլ է նաև ձիերի դիրքը: Թեև երկուսի մոտ էլ դրանք շարժման մեջ են, սակայն, ի տարբերություն Քոչարի, ով ձիուն հաղորդել է սրընթաց շարժում՝ հատկապես արտահայտիչ տեսք տալով ոտքերին, որոնք գետնից պոկված են, Տեր-Հարությանի պատկերած ձին համեմատաբար ստատիկ է: Երկու հեղինակն էլ շեշտում են Վարդանի՝ ցատում արտահայտող ձեռքերի շարժումները:

Հայ պատմական գործիչներին պատկերող երկերի շարքում կարելի է առանձնացնել Տեր-Հարությանի կերտած «Մեսրոպ Մաշտոց» (նկ. 9) և «Սահակ Պարթև» (նկ. 10) բրոնզե ստեղծագործությունները (1964 թ.), որտեղ կերպարները պատկերված են ամբողջ հասակով:

11 Քեմբելը նշում է, որ ստեղծելով շարժման տպավորություն ստատիկ ձևերի մեջ, այնուամենայնիվ հավասարակշռվածության ծայրահեղ զգացողությունը առանցքային է Տեր-Հարությանի արվեստում: Տեր Cambell M., RCC Art Has Balance, "The Rockland County Journal-News", 1967, 11 February:

12 Տեր Турчин В., Образ двадцатого... в прошлом и настоящем, М., издательство «Прогресс-традиция», 2003, էջ 600:

13 Տեր Агасян А., Ерванд Кочар, Ереван, издательство «Гитутюн» НАН РА, 1999, էջ 85:

14 Ըստ Ջոն Դալլասի՝ «Քաջ Վարդանը կառքի վրա» աշխատանքը և մի շարք այլ քանդակներ վկայում են Տեր-Հարությանի՝ իր էթնիկ և մշակութային արմատների խոր իմացության և դրանց հետ սերտ կապի մասին:





9. «Մերոպ Մաշտոց», 1964 թ.



10. «Սահակ Պարթև», 1964 թ.

Այսպիսով, անդրադառնալով տարբեր թեմաների, պատկերելով զանազան կերպարներ՝ հորեն Տեր-Հարությանը գովերգում է գեղեցիկը, վեհը: Նա իր արվեստով հատկապես խաղաղության կոչ է անում՝ իրեն ամբողջովին նվիրելով այդ գաղափարին:

Խաղաղասիրական միտումները Տեր-Հարությանի արվեստում դրսևորվել են ստեղծագործական գործունեության ողջ ընթացքում: Աստվածաշնչյան, դիցաբանական, կենցաղային սյուժեները հանդես են գալիս դեռևս Ջամայկայի վաղ շրջանի գործերում, որոնք պարունակում են բողոքի հզոր այլք՝ ընդդեմ չարի: Աշխատանքներից յուրաքանչյուրը յուրովի է արտահայտում Տեր-Հարությանի մարդասիրական մղումները: Սակայն ողջ աշխարհում խաղաղության հաստատման նրա երազանքը իր կատարյալ դրսևորումն է գտնում «**Ձոն խաղաղության**» քանդակում (նկ.11):



11. «Ձոն խաղաղության» (մանրակերտ), 1987 թ.

1987 թ. հունվարին Խորեն և Յոլանտա Տեր-Հարությանները Մոսկվայում այցելում են արտասահմանյան հայրենակիցների հետ մշակութային կապերի «Ռոդինա» սովետական ընկերություն: Այստեղ Տեր-Հարությանը ներկայացնում է «Ձոն խաղաղության» քանդակի գրաֆիկական էսքիզը: «Հայրենիքի ծայն» թերթի թղթակից Տատյանա Սոլովյովան գրում է. «Հրաժեշտից առաջ քանդակագործը պատմեց իր նոր մտահղացման մասին: Նա հայացքով չափեց ընդունարանի մեծ սեղանը, բայց որոշեց որ, այնուամենայնիվ, էսքիզը հարմար է ցուցադրել ուղղակի հատակին: Կքեց և անշտապ սկսեց բաց անել պողպատագույն թղթի փաթեթը: Ներկաներիս աչքի առջև կյանք առավ ճերմակաթև աղավնին: Ո՛չ, նա չթռավ, թևերը բացեց միայն՝ պատրաստվելով թռիչքի. նա աղջկական ձեռքում է՝ ամուր, քնքուշ, նրբագեղ... Ահա և ինքը՝ աղջիկը՝ թեթևասահ, ճիշտ և ճիշտ պարուհի, թեթևակիորեն հավել է երկրագնդին: Խաղաղությունն անբաժան է գեղեցկությունից, սակայն գեղեցկությունը ևս չի կարող լինել առանց խաղաղության: Ահա թե ինչ մտքեր է ներշնչում այս կերպարը»<sup>15</sup>:

Խոսելով «Ձոն խաղաղության» արձանի մտահղացման մասին՝ Տեր-Հարությանը նշում է. «Ապագա քանդակիս գաղափարը ծնվել է Մոսկվայում: Ես շրջագայել եմ ամբողջ աշխարհով, հաճախ եմ լինում ՍՍՀՄ-ում և սեփական աչքերով եմ տեսնում սովետական ժողովրդի խաղաղության անկեղծ ձգտումը: Ես ջերմորեն հավատում եմ մարդկային բանականությանը և հուսով եմ, որ ժողովուրդներն ընդհանուր լեզու կգտնեն, կփրկեն մեր մոլորակը միջուկային աղե-

<sup>15</sup> Սոլովյովա Տ., Մոսկվան ոգեշնչեց ինձ, «Հայրենիքի ծայն», Եր., 1987, 28 հունվարի, էջ 4:

տից: Հենց այդ միտքն են ուզում շեշտել այս աշխատանքով, ուր ներդնելու են 53 տարվա ստեղծագործական իմ ողջ փորձը: Եվ ոչ միայն քանդակագործի փորձը, այլև հարազատ հայ ժողովրդիս հիշողությունը...»<sup>16</sup>:

Իբրև խաղաղության մարմնացում Տեր-Հարությանը ներկայացնում է երիտասարդ աղջկա, որը դեպի վեր բարձրացրած աջ ձեռքով թեթևակիորեն հպվում է թևերը պարզած աղավնուն և խորհրդանշում է խաղաղության հրեշտակին, որը, իջնելով երկնքից, աջ ոտքով նրբորեն դիպչում է իր տակ գտնվող գնդին՝ Երկիր մոլորակի խորհրդանիշին<sup>17</sup>:

Ի վերջո, 1987 թ. հոկտեմբերին Խորեն Տեր-Հարությանը Մոսկվայում հանրությանն է ներկայացնում «**Ձոն խաղաղության**» արձանի գիպսե մանրակերտը: Սկիզբն առնելով հետ մշակութային կապերի կոմիտեի նախկին աշխատակից Ռուբեն Ավետիսյանը, ով ուղեկցում էր Տեր-Հարությանին Մոսկվայում, նշում է, որ այն մեծ ոգևորությամբ է ընդունվում: Խոսելով իր ստեղծագործության մասին՝ Տեր-Հարությանը համոզված էր. «Փորձեք գտնել տիեզերքում ևս մեկ այսպիսի մոլորակ, գտնել գեթ մեկ փոքրագույն կյանքի նշույլ: Այս աշխարհը գաղտնիք է: Ես չգիտեմ, թե ինչ է Աստված, բայց ինչ-որ մի հզոր ուժ ստեղծել է այս աշխարհը: Մարդկային արարածները իրավունք չունեն կործանելու այն: Սա է իմ աշխատանքի գաղափարը: Քանդակը գեթ է որևէ միստիկական մտքից: Պարզապես այստեղ միաձուլվում են մարդկության «երկրային» և «երկնային» մղումները»<sup>18</sup>:

Իր հերթին «Ռոդինա» ռադիոկայանի թղթակից Ադա Կաբանովան նշում է. «Գլուբալ միտքը պահանջում է համապատասխանաբար առավել ընդհանրացված ծավալներ: «**Ձոն խաղաղության**» քանդակի մտահղացման ժամանակ այդ չափսը գտնված է»<sup>19</sup>: Հոդվածներից մեկում Տատյանա Սոլովյովան, բնութագրելով արձանը, նշում է. «Թեթև, ճիշտ ինչպես պարուհի, բարավիկ, նրբագեղ աղջնակը հազիվ դիպչում է ոտքով Երկիր մոլորակին: Դիտելով այս՝ առայժմ մանրակերտի տարբերակով քանդակին, դժվար չէ այն պատկերացնել մոսկովյան փողոցներից մեկում»<sup>20</sup>:

Նույն հոդվածում Խորեն Տեր-Հարությանն ինքն է ներկայացնում իր ստեղծագործությունը. «Աղջիկը գեղեցիկի խորհրդանիշն է: Հենց գեղեցիկը պետք է փրկի աշխարհը: Թեև մենք՝ մարդիկ, պարտավոր ենք մեր հերթին փրկել գեղեցիկը: Իսկ դա հնարավոր է միայն՝ պահպանելով խաղաղությունը մոլորակի վրա... Աղջիկը իջնում է Երկրի վրա: Նա եկել է մեզ մոտ տիեզերքից: Ես ֆանտաստիկ ոչինչ նկատի չունեմ: Պարզապես ես հենց այսպես եմ պատկերացնում գեղեցիկը: Նա պետք է թռչի Երկրի վրայով: Բայց նա կարող է անհետանալ, եթե մարդիկ լինեն անտարբեր»<sup>21</sup>:

16 Նույն տեղում:

17 Նշենք, որ ի սկզբանե «**Ձոն խաղաղության**» հորինվածքում առկա էր ևս մեկ կերպար: Ուս աղջկա ոտքերի տակ՝ գնդի վրա ընկած մարդկային կմախք էր, որից հետագայում արվեստագետը հրաժարվում է:

18 Ода Миру, «Литературная газета», М., 14 октября, 1987, с. 15.

19 Кабанова А., Момент истины, р/с «Родина», 1987, 23 январь.

20 Соловьева Т., Ода Миру, «Голос Родины», М., 1988, 28 января.

21 Նույն տեղում:

«Ձոն խաղաղության»-ը վերջնական տարբերակում պետք է ծուլվեր բրոնզից, ունենար 5 մ բարձրություն: Երկրագունդը, որի վրա պետք է կանգնած լինեն խաղաղության խորհրդանիշ աղջկա ֆիգուրը, պետք է ունենար 1,5 մ բարձրություն և լիներ բրոնզածուլ: Երկրագնդի չափսերը կարող էին փոխվել՝ կախված տեղանքից: Բայց այն պետք է ունենար գրանիտե հիմք: Գնդի մեջ պետք է տեղադրվեր մեխանիզմ, որը ապահովելու էր նրա պտույտը: Երկրագունդը կատարելու էր ժամում 60 պտույտ:

Արձանի պտույտը շատ էր կարևորվում հեղինակի կողմից, քանի որ «աշխարհում կատարվող ամեն բան» գտնվելու էր աղջկա տեսադաշտում: Ընդ որում՝ հեղինակը ցանկություն է հայտնել աշխատանքը կատարել Հայաստանում: Փոխարենը նա պետք է հրավիրեր «Ռոդինայից» որևէ ներկայացուցչի, ով ներկա կլիներ աշխատանքի իրականացման ընթացքին:

Տեր-Հարությանը անձամբ էր հետևում իր յուրաքանչյուր քանդակի ծուլմանը և դրան նախորդող գործընթացին: «Ձոն խաղաղության» ստեղծագործությունը բացառություն չէր: Նա պետք է անձամբ ներկա լիներ արձանի ծուլմանը, որպեսզի մշակեր վերջնական փուլում՝ պահպանելու համար նյութի բնական տեսքը: Դա աշխատանքային մեթոդ էր, ինչը, ըստ հեղինակի, ապահովում է քանդակի արտիստիկությունն ու գեղեցկությունը: Նա ցանկանում էր արձանը կանգնեցնել Մոսկվայի «Խաղաղության այգում»<sup>22</sup>:

«Չեմ կարող ինձ ներել, որ լույս աշխարհ եկավ մոդելը և ոչ ավարտուն քանդակը: Եվ այժմ ստիպված եմ վերադառնալ արդեն իրագործված կերպարին: Իսկ արվեստը չի հանդուրժում կրկնություններ: Թեև առայժմ հանձն չեմ առնում դատել, թե ինչպիսին կլինի վերջնական տարբերակը: Սակայն մեկ բան հստակ է, որ ես այն նվիրելու եմ Մոսկվային»<sup>23</sup>:

Իբրև խորհրդանշական կերպար, մասնավորապես՝ խաղաղության խորհրդանիշ՝ աղավնու կերպարը հանդես է գալիս հատկապես 20-րդ դարի տարբեր ստեղծագործողների գործերում: Պաբլո Պիկասոյի ստեղծագործություններում այս մոտիվը գտնում է գեղանկարչական, գրաֆիկական բազմաձև դրսևորումներ: Տեր-Հարությանը յուրովի է ներկայացնում աղավնու կերպարը, ամբողջացնում է և դարձնում հորինվածքի խորհրդանշական տարր: Հեղինակն իբրև խաղաղության խորհրդանիշ է դիտարկում նաև աղջկա կերպարը, որին պատկերում է ամբողջ հասակով՝ նրան վերապահելով գլխավոր դերակատարումը:

Աղավնու կերպարը՝ իբրև կյանքի շարունակելիության և բարության խորհրդանիշ, հանդես է գալիս ամենավաղ շրջաններից: «Աղավնին խորհրդանշական նշանակություն է ստացել դեռ սկզբնական, կարելի է ասել՝ Սուրբ Գրքի հնագույն գլուխներում, և հատկապես՝ Համաշխարհային ջրհեղեղի մասին պատմության վերջնահատվածում». «Եվ բաց թողեց Նոյը աղավնուն, որպեսզի տեսնի՝ արդյո՞ք ջուրը հեռացել է ցամաքի վրայից...»<sup>24</sup>:

22 Խորեն Տեր-Հարությանի նամակը «Ռոդինա» ընկերությանը, 23 մարտի, 1987թ.:

23 Талов Б., Ода Миру, «Вечерняя Москва», М., 27 августа, 1988, с. 3.

24 Агасян А., Ерванд Кочар, Ереван, изд-ство «Гитутюн» НАН РА, 1999, с. 28.

Աղավնու խորհրդանիշը իր արդիականությունը վերագտավ հատկապես 20-րդ դարում, որը նշանավորվեց միջուկային զենքի կիրառմամբ, և այդ իրողությունն իր արտացոլումը գտավ Տեր-Հարությանի մի շարք աշխատանքներում («**Հիրոսիմա**», 1964 թ. և այլն): Սա այլևս համամարդկային խնդիր էր:

Յուրաքանչյուր հեղինակ յուրովի է պատկերում աղավնու կերպարը, սակայն անփոփոխ է աղավնու «խորհուրդը»: Այն առկա է նաև Երվանդ Քոչարի արվեստում: Հատկապես խորհրդանշական է նրա «**Պատերազմի արհավիրքները**» մեծածավալ կտավի աղավնին: Կտավի ստորին հատվածում երևում է Վենետրայի կերպարը, որի ձեռքում դեռ թրթռում է խաղաղության աղավնին: Սա դիտվում է որպես անարգված, ոտնահարված գեղեցկության խորհրդանիշ<sup>25</sup>: Տեր-Հարությանի այս «համամոլորակային» նախաձեռնությունը չի ստանում իր վերջնական տեսքը: Այն ընդհատվում է հեղինակից անկախ պատճառներով:

1988 թ. սկսվում է Արցախյան շարժումը: Սփյուռքահայերի հետ մշակութային կապերի կոմիտեի նախկին լուսանկարիչ Պետրոս Պետրոսյանը, ով նաև բարեկամական հարաբերությունների մեջ էր խորեն Տեր-Հարությանի հետ, նշում է, որ այդ ընթացքում Տեր-Հարությանը Հայաստանում էր: Եվ երբ նա տեսնում էր, թե ինչպես են ռուսական զորքերը շրջափակել Օպերայի հրապարակը, տաժեղով մեծ հարգանք ռուսների նկատմամբ՝ չէր հավատում իր աչքերին: Նա ասում էր. «Զի կարող պատահել...»: Արվեստագետը մեծ հիասթափություն է ապրում: Ընդհատվում է նրա կապը Մոսկվայի հետ: Դա էլ դառնում է պատճառ, որ խորեն Տեր-Հարությանը վերջնականապես դադարեցնի աշխատանքը «**Ձոն խաղաղության**» արձանի վրա<sup>26</sup>:

Այսպիսով, եթե Տեր-Հարությանի քարե ստեղծագործությունների բարձրակետը դարձավ «**Վերածնված Հայաստանը**», ապա լավագույն բրոնզե քանդակը կարող էր լինել «**Ձոն խաղաղության**» կոթողը:

**Ամփոփելով** խորեն Տեր-Հարությանի բրոնզե ստեղծագործությունների ուսումնասիրությունը՝ հարկ է նշել, որ ինչպես իր փայտե և քարե քանդակներում, նրա բրոնզե երկերում անդրադարձ է արվում տարբեր թեմաների, որոնք ստանում են ոճային տարբեր լուծումներ: Այս շրջանում կտրուկ փոխվում է արվեստագետի ոճը: Նրա քարե քանդակների ողորկ, կլորավուն ձևերը փոխարինվում են կտրուկ, սուր, անհարթ մակերեսներով: Ընդ որում՝ բրոնզի հետ աշխատելիս Տեր-Հարությանը առավել ազատ է վարվում քանդակային ձևերի հետ, և որպես արդյունք՝ տարբեր շրջանների բրոնզաձույլ երկերը ստանում են գեղանկարչական աշխուժ, թրթռուն ձևեր:

25 Տե՛ս նույն տեղում, էջ 70:

26 Զի կարելի վատահաբար պնդել, որ Տեր-Հարությանը վերջնականապես հրաժարվել է քանդակը ավարտին հասցնելու մտքից: Հայտնի է 1991 թ. "Armenian Mirror Spectator" պարբերականի "Sculptor Khoren Der Harootian hit by car killed on Thruway" հոդվածը, որտեղ հոդվածագիր Քեթի Քերոլը նշում է, որ խորեն Տեր-Հարությանը ավտովթարի է ենթարկվել այն պահին, երբ իր երրորդ կնոջ հետ «**Ձոն խաղաղության**» արձանի համար գնված նյութերով վերադառնում էր արվեստանոց:

**Արթուր Ա. Հովհաննիսյան**- 2010 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Խորեն Տեր-Հարությանի արվեստը» թեմայով: Հեղինակ է մի շարք գիտական հոդվածների, որոնք առնչվում են Խորեն Տեր-Հարությանի արվեստի ուսումնասիրությանը:

Email: arthurartist@yahoo.com

## Summary

### THE BRONZE SCULPTURES OF KHOREN DER-HARUTYAN

Arthur A. Hovhannisyanyan

**Key words** – Khoren Der-Harutyanyan, bronze sculptures, Armenian Genocide, Armenia, Jamaica, USA, England, Italy, tragic content, socio-political problems, sculptural forms.

This article is dedicated to the study of the bronze sculptures of well-known Armenian sculptor-artist Khoren Der-Harutyanyan. Der-Harutyanyan's works were formed in the early 30's of the 20<sup>th</sup> century, outside of the historical homeland, particularly on the Latin American island of Jamaica. Here he created numerous colorful paintings and graphic works, as well as, great amount of sculptures from different types of local solid wood. In the following years Der-Harutyanyan's art was developed in the USA, England, Italy, as well as, in Armenia.

Khoren Der-Harutyanyan's works generally present not only tragic events referring his childhood, but also the basic socio and political problems of the 20<sup>th</sup> century, which have left a deep mark on the fate of humankind. The works of the artist reflected the disasters of the Armenian Genocide, the Second World War, Hiroshima atomic explosion, the Vietnam War, etc. But the images with tragic content are often followed by the works with the spirit of heroism, optimism, love and unity.

The bronze sculptures, which have been around since the 1960's are important in Khoren Der-Harutyanyan's art. In 1962-1963 Der-Harutyanyan lived in the city of Florence, Italy, where he improved the techniques of working with bronze. The artist was particularly influenced by the monuments of the Italian Renaissance. There is a variety of themes and styles touching eternal universal themes not only in his works of wood and stone, but also in his bronze sculptures. Here the themes of heroic struggle, survival, unyielding human spirit are also considered. The style of the artist is dramatically changed in this period. The slick, round forms of his wooden and stone sculptures are replaced by sharp, rough surfaces. Besides, working with bronze Der-Harutyanyan deals more freely with sculptural forms and as a result, the bronze works of different periods get lively, vibrant forms.

## БРОНЗОВЫЕ СКУЛЬПТУРЫ ХОРЕНА ТЕР-АРУТЯНА

Артур А. Ованисян

**Ключевые слова** - Хорен Тер-Арутян, бронзовые скульптуры, Геноцид армян, Армения, Ямайка, США, Англия, Италия, трагический сюжет, социально-политические проблемы, скульптурные формы.

Данная статья посвящена исследованию бронзовых скульптур выдающегося армянского скульптора-художника Хорена Тер-Арутяна. Творчество Тер-Арутяна сформировалось в начале тридцатых годов 20-го века за пределами исторической родины, в частности, на острове Ямайка. Здесь он создал множество красочных живописных и графических работ, а также многочисленные скульптуры из разных видов местного прочного дерева. В последующие годы искусство Тер-Арутяна развивалось в США, Англии, Италии, а также в Армении.

В произведениях Хорена Тер-Арутяна в целом отразились как трагические события его детства, так и ключевые социально-политические проблемы, которые ознаменовали 20-й век и которые оставили глубокий след в судьбе человечества. Работы скульптора отражают катастрофы Геноцида армян, Второй мировой войны, ядерной бомбардировки Хиросимы, войны во Вьетнаме и многих других. Но за трагическими сюжетами часто следуют произведения, наполненные героизмом, оптимизмом и любовью.

Важное место в творчестве Хорена Тер-Арутяна занимают бронзовые скульптуры, которые встречаются с 1960-х годов. С 1962-1963 годов Тер-Арутян проживал во Флоренции, где совершенствовал свою технику работы с бронзой. На художника особенно повлияли памятники итальянского Ренессанса. Как и деревянные и каменные скульптуры, его бронзовые скульптуры имеют множество тем, затрагивающих общечеловеческие проблемы. Здесь также отражаются темы героической борьбы, выживания, непреклонного человеческого духа. Но в этот период резко меняется стиль скульптора. Его гладкие, округлые формы каменной и деревянной скульптуры сменяются острыми, шероховатыми поверхностями. Работая с бронзой, Тер-Арутян более открыт для скульптурных форм, и в результате его бронзовые произведения получают более живописные, вибрирующие формы.

## REFERENCES

1. **Lixt' F. S.**, Xoren Ter Yarut'ean. Nsh'anavor ardz'anagore՞, "Azdak" Beirut', 1963, 24 ogostos (**In Armenian**).
2. **Harut'yunyan V.**, Hayrenash'unch' arvest, "Hayreniqi dz'ayn", Ye'r, 1970, 27 mayis (**In Armenian**).
3. **Turchin V.**, Obraz dvadcatogo... v proshlom I nastojash'em, M., Izdatel'stvo "Progress-tradicija", 2003 (**In Russian**).
4. **Agasyan A.**, Jervand Kochar. Jerevan, Izdatel'stvo "Gitut'yun" NAN RA, 1999 (**In Russian**).
5. **Solovyova T.**, Moskvian vogesh'nch'ec indz' "Hayreniqi dz'ayn", Ye'r, 1987, 28 hunvar (**In Armenian**).
6. Oda Miru. "Literaturnaja gazeta", M., 1987, 14 oktjabr', ej 15 (**In Russian**).
7. **Kabanova A.**, Moment istiny, r/s "Podina", 1987, 23 janvar' (**In Russian**).
8. **Solov'jeva t.**, Oda Miru, "Golos Rodiny", M., 1988, 28 janvar' (**In Russian**).
9. Xoren Ter-Harut'yani namakə "R'odina" ənkerut'yanə, 1987 t', 23 mart (**In Russian**).
10. **Talov B.**, Oda Miru, "Vechernaja Moskva", M., 1988, 27 avgust (**In Russian**).